ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1966 թ. մարտի 16-ին կայացավ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը՝ նվիրված ակադեմիայի 1965 թ. դիտական գործունեության հիմնական ա.դյունքների քննարկմանը։

Ժողովի աշխատանքներին մասնակցում էին ակադեմիայի իսկական և թղթակից անդամներ, գիտահետազոտական ինստիտուտների ղեկավարներ և գիտական աշխատակիցներ, բուհերի դասախոսներ, պարտիական և սովետական ղեկավար աշխատողներ, արտադրական ձեռնարկությունների և ճյուղային ինստիտուտների ղեկավարներ։ Ժողովին ներկա էին Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ն. Քոչինյանը, Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Խ. Հարությունյանը, ՀԿՊ Կենտկոմի քարտուղար Ռ. Հ. Խաչատրյանը, ՀԿՊ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Լ. Պ. Ղարիբջանյանը։

Ընդհանուր ժողովը ներածական բնդարձակ ճառով բացեց ռեսպուբլիկայի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։ Պրեզիդենտը նշեց գիտության բնագավառի այն գլխավոր նվաճումները, որոնց հասել են ակադեմիայի հիմնարկները հաշվետու տարում, ցույց տվեց աշխատանքներում տեղ գտած թերությունները, նրանց վերացման ուղիները։

Ակադեմիկոս Համբարձումյանը հանգամանորեն կանգ առավ ակադեմիայի զարգացման հեռանկարների վրա։ Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնական ուղղությունները լրիվ համապատասխանում են այն խնդիրներին, որոնք դրվում են երկրի գիտության առջև, ասաց նա։ Պրեզիդենտը համոզմունք հայտնեց, որ ակադեմիայի բոլոր աշխատակիցները կլարեն իրենց ուժերը գիտական կոլեկտիվների առջև դրված ավելի պատասխանատու խնդիրները լուծելու համար։

Գիտությունների ակադեմիայի 1965 թ. գիտական գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով ժողովում հանդես եկավ ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար Ս. Ս. Մկրտչյանը։

1965 թ. ռեսպուբլիկայի գիտությունների ակադեմիայի հիմնարկների ուշադրությունը կենտրոնացվեց տեսական և ժողովրդատնտեսական խոշոր նշանակություն ունեցող 9 կոմպլեքսային ուղղությունների լուծման վրա, ուղղություններ, որոնք ընդգրկում են 76 պրոբլեմ, 360 թեմա,— ասաց ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղարը,— յուն ճակատով ուսումնասիրություններ կատարվեցին ֆիզիկա-տեխնիկական և մաթեմատիկական, երկրաբանական, կենսաբանական, քիմիական, հասարակական գիտությունների ամբողջ կոմպլեքսի շատ բնագավառներում։ Ստացված մի շարք արդյունքներ լուրջ ներդրում են սովետական և համաշխարհային գիտության զարգացման գործում։

Ակադեմիկոս-քարտուղարի զեկուցման մեջ հանգամանորեն խոսվեց նաև հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկների գործունեության մասին։

Այս բաժանմունքում մշակվում են հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի, մանկավարժության, փիլիսոփայության, իրավունքի, աղգագրության, տնտեսագիտության, արևելագիտության, գեղագիտության և այլ հարցերի վերաբերյալ 33 պրոբլեմներ, որոնք ընդգրկում են 133 թեմա։ Ակադեմիայում աշխատող պատմաբանների, գրականագետների, բանասերների և մյուս գիտնականների աշխատություններում նանակալից տեղ են գրավում հայ ժողովրդի և ՍՍՌՄ մյուս ժողովուրդների միջև գոյություն ունեցող պատմական, քաղաքական, հասարակական, գաղափարական և մշակութային կապերի ուսումնասիրման հարցերը։

Տնտեսագիտության ինստիտուտի կոլեկտիվը աշխատել է ժողովրդական տնտեսության պլանավորման կատարելագործումը, կապիտալ ներդրումների և հիմնական ֆոնդերի էֆեկտիվությունը, տնտեսական հաշվարկ, գնակազմության և արտադրության մեջ նյութական շահագրգռվածության բարձրացումը պրոբլեմների ուղղությամբ։

Պատմության ինստիտուտում աշխատանք է ծավալվել «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատոր աշխատության ստեղծման ուղղությամբ։ Տպագրվել են մի շարք աշխատություններ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի և սոցիալիստական ու կոմունիստական շինարարության, ինչպես նաև հայ ժողո-

վրդր հին, միջին դարերի ու նոր պատմության հարցերի վերաբերյալ։

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կոլեկտիվի ջանքերը կենտրոնացված են սովետահայ գրականության զարգացման օրինաչափությունների, հայ նոր և հին գրականության, գրական կապերի, հայ դասական գրողների երկերի հրատարակության և այլ հարցերի վրա։ Տպագրության են հանձնված Ռ. Պատկանյանի երկերի 3-րդ և 4-րդ հատորները, նախապատրաստված են տպագրության Մ. Աբեղյանի երկերի 1-ին և 2-րդ հատորները։ 1965 թ. լույս տեսան Հ. Պարոնյանի երկերի 4-րդ և 5-րդ հատորները, Հովհ. Հովհաննիսյանի երկերի 3-րդ հատորը, Ե. Չարենցի երկերի 5-րդ հատորը։

Հնագիտության և ազգագրության ինստիտուտում աշխատանք է տարվել Հայաստանի հնագիտական ատլասի կազմման ուղղությամբ։ Այստեղ ավարտվել են «Հայաստանի էնեոլիթի հուշարձանները», «Բրոնզի և վաղ երկաթի շրջանի հուշարձանները», «Հայաստանի կիկլոպյան բերդերը», «Անտիկ շրջանի հուշարձանները», «Միջնադարյան Հայաստանի քաղաքները» թեմաները։ Զգալի աշխատանք է կատարված նաև «Հայաստանի ազգագրական ատլաս»-ի ստեղծման ուղղությամբ։

Լեզվի ինստիտուտն աշխատել է հայոց լեզվի զարգացման օրինաչափությունների, բառարանագրության և բառագիտության, հայոց լեզվի պատմության, հայ բարբառների ուսումնասիրության և այլ հարցերի վրա։ Լույս է տեսել Հ. Աճառյանի «Հայոց լեզվի լիակատար քերականության» 5-րդ հատորը։

Նոր հաջողություններ են ձեռք բերվել փիլիսոփայության և արևելագիտության սեկտորներում։

Ժողովում նշվեց այն, որ հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկների գիտական կոլեկտիվների ուժերը այժմ կենտրոնացվում են գերազանցապես հայագիտության կարևորագույն պրոբլեմների գծով ընդհանրացնող խոշոր աշխատությունների ստեղծման շուրջը։ Բաժանմունքի յուրաքանչյուր հիմնարկ ներկայումս ունի այն գլխավոր պրոբլեմը, որի մշակմանն են ուղղված տվյալ գիտական կոլեկտիվի ջանքերը։

Ակադեմիայի ընդհանուր ժողովում ծավալվեց մտքերի փոխանակություն։ Ելույթ ունեցան ՀՍՍՌ ԳԱ վիցե-պրեզիդենտներ Հ. Խ. Բունիաթյանը, Մ. Գ. Ներսիսյանը, ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոսներ Ա. Ս. Ղարիբյանը, Ա. Ա. Առամելյանը, Ի. Վ. Նդիազարովը, Վ. Հ. Գուլբանյանը, Վ. Ի. Իսագուլյանցը, Ա. Ի. Ալիխանյանը, թղթակից-անդամ Գ. Բ. Ղարիբջանյանը և ուրիշներ։

Ընդհանուր ժողովում լսվեցին նաև գիտական զեկուցումներ։ Զեկուցումներով հանդես եկան ԳԱ ակադեմիկոսներ Ա. Ա. Ալիխանյանը, Ա. Գ. Հովհաննիսյանը և թղթակից-անդամ Հ. Տ. Ադոնցը։

Ակադեմիայի ընդհանուր ժողովը քննարկեց նաև կազմակերպական հարցեր։ Ակադեմիայի կանոնադրության համաձայն ակադեմիայի նախագահության ժամկետը լրացած անդամների փոխարեն ընտրվեցին նորերը։ Նախագահության անդամներ ընտրվեցին ԳԱ ակադեմիկոսներ Ս. Ս. Մկրտչյանը (միաժամանակ՝ ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար), Վ. Հ. Գուլբանյանը (միաժամանակ՝ կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար), Գ. Ս. Դավթյանը, Ա. Ղ. Իոսիֆյանը, Ա. Գ. Նազարովը։

Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԸ

Մեծանուն լեզվաբան ու հայագետ Հրաչյա Աճառյանի ծննդյան 90-ամյակին էր նվիրված Հայկական ՍՍՌ ԳԱ լեզվի ինստիտուտի գիտական նստաշրջանը, որը տեղի ունեցավ 1966 թ. մարտի 21—22-ին։

Նստաշրջանը ներածական խոսքով բացեց ինստիտուտի դիրեկտոր պրոֆ. Գ. Բ. Ջահուկյանը։

Հր. Աճառյանի կյանքի և գիտական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ պրոֆ. Է. Բ. Ադալյանը։ Խոսելով Աճառյանի լեզվաբանության և հայագիտության մասին խոշոր ծառայությունների մասին, նա հատկապես ընդգծեց, որ հայոց լեզվի ուսումնասիրությանը նվիրված նրա աշխատությունները ամփոփում են շուրջ մեկ հարյուրամյակի ընթացքում հայերենագիտության նվաճումները և նոր մակարդակի բարձրացնում հայ լեզվաբանական միտքը։ Իր մեծարժեք հետազոտություններով Աճառյանը նոր ուղիներ է հարթել հայագիտության մի քանի ճյուղերի համար (բարբառագիտություն, հայոց լեզվի պատմություն և այլն), որոնց հիմնադիրը ամենայն իրավամբ համարվում է ինքը։ Այնուհետև զեկուցողը բնութագրում է Աճառյանի գա-